ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2021 թվականի N 1215

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1 ՇԵՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Երեմի Հարությունյանի 25.01.2021թ. թիվ 1063 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 1 շենքի արևելյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 27.6քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 26.56քմ) մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 27.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 1 շենքի արևելյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Մյասնիկյան փողոց, թիվ 1-7/7 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2021 թվականի N 1216

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 25 ՓԵՏՐՎԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 323 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 06.02.2008թ. տրված թիվ 106452 մահվան վկայականը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1261693 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքապետի 25 փետրվարի 2005 թվականի «Երեմ Հարությունյանին հողամաս տրամադրելու մասին» թիվ 323 որոշումը՝ 25.03.2005թ. հողատարածքի վարձակալության թիվ 293 պայմանագիրը համարելով լուծված:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 1 շենքի թիվ 27ա հասցեում գտնվող հողամասի վճարների վերահաշվարկ և վերջնահաշվարկ:

3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, տեղեկատվության և աշխատանքի բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը ուղարկել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2021 թվականի N 1217

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 50 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԼԻԱ ՔԱՌՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԻՆԿԱԼԱՆՈՑԻ ՏԱՐԱԾՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ , ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լիա Սեյրանի Քառյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 008657 վկայականը, 31.05.2021թ. թիվ 2423 (նոտարական ակտի կոդ: 763-20210531-66-5137019) հայտարարությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ, 27-րդ, 31-րդ կետերով և 32-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Լիա Քառյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորիչի փողոց թիվ 50 հասցեի խինկալանոցի տարածքում ինքնակամ իրականացված ձևափոխումը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ ձևափոխման օրինականացման համար սահմանված վճարը՝ 3780 (երեք հազար յոթ հարյուր ութսուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորիչի փողոց թիվ 50 հասցեում գտնվող, Լիա Քառյանին սեփականության իրավունքով պատկանող խինկալանոցի տարածքի զբաղեցրած, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող Լիա Սեյրանի Քառյանի և «Անի-34» ՍՊԸ-ի ընդհանուր օգտագործման տակ գտնվող 44.2քմ մակերեսով հողամասից 22.1 (44,2:2)քմ մակերեսով հողամասը, հողի կադաստրային արժեքով՝ 550040 (հինգ հարյուր հիսուն հազար քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Լիա Սեյրանի Քառյանին:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Լիա Սեյրանի Քառյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 22.1քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:
5. Վանաձոր քաղաքի Գր.Լուսավորիչի փողոց, թիվ 50 հասցեում գտնվող խինկալանոցի տարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Գր.Լուսավորչի փողոց, թիվ 50/2-5 խինկալանոցի տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2021 թվականի N 1218

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ՄՄՇ ԹԻՎ 52Ժ ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ԵՎ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍ ՄԵՔԵՆԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 52Ժ ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԼԻՅԱ ԳՈՒՐԳԵՆԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լիյա Գուրգենի Դավթյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1931321 և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14042021-06-0044 վկայականները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Տարոն-4 ՄՄՇ թիվ 52Ժ շենքի թիվ 4 և Տարոն-4 թաղամաս Մեքենաշինարարների փողոց թիվ 52Ժ շենքի թիվ 4 հասցեներում գտնվող, Լիյա Գուրգենի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող 78.22քմ ընդհանուր մակերեսով բնակարանները՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-4, Մեքենաշինարարների թաղամաս, թիվ 4 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2021 թվականի N 1219

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 34-40/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱՐԻՆԵ ԶԱՎԵՆԻ ԳԻՆՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարինե Զավենի Գինոսյանի 26.01.2021թ. թիվ 02/1214 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052021-06-0035 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 34-40/5 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 16.64քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 15.81քմ) մետաղական ավտոտնակը 43270 (քառասուներեք հազար երկու հարյուր յոթանասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 32.7քմ մակերեսով հողամասը 147940 (հարյուր քառասունյոթ հազար ինը հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Նարինե Զավենի Գինոսյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Նարինե Զավենի Գինոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մետաղական ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 07
Ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2021 թվականի N 1220

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 73 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տիգրան Աշոտի Անտոնյանի լիազորված անձ Հայկ Աշոտի Անտոնյանի դիմումը, 08.04.2021թ. թիվ 932 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20210408-79-5033690), 28.04.2021թ. անշարժ գույքի առուվաճառքի թիվ 1191 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20210428-2-5073808), անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 600073 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 73 հասցեում գտնվող արտադրամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Աղայան փողոց, թիվ 73/2-3 արտադրամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2021 թվականի N 1221

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ, ԹԻՎ 22-2/2-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ- ՄԱՌԱՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՄԱՌԱՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լևոն Ալբերտի Ալավերդյանի 01.06.2021թ. թիվ 7756 դիմումը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա, թիվ 22-2/2-1 հասցեում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 16.67քմ ընդհանուր արտաքին մակերեսով(ներքին մակերեսը՝ 11.22քմ) կիսակառույց-մառանների և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 94.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցները:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված կիսակառույց-մառանները և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված կիսակառույց-մառանները ինքնակամ կառուցումը իրականացրած անձին կիսակառույց-մառանները և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 22-2/2-1 կիսակառույց-մառաններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2021 թվականի N 1222

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

Գումարել Վանաձոր համայնքի ավագանու արտահերթ նիստ 2021 թվականի հունիսի 09-ին՝ ժամը 11:00-ին, համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում հետևյալ օրակարգով.

1.Վանաձոր համայնքի ավագանու 2021թ. հունիսի 09-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 123-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորհամայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 123-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

4. Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ լիազորելու վերաբերյալ

Ա.Հովհաննիսյան

5. Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ լիազորելու վերաբերյալ

զեկ.Ա.Հովհաննիսյան

6. Վանաձոր համայնքի ավագանու անդամ _____ լիազորելու վերաբերյալ

զեկ.Ա.Հովհաննիսյան

7.Վանաձոր համայնքի «Տիկնիկային թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տարածքների վարձավճարների նվազագույն սակագները սահմանելու մասին

զեկ.Վ.Դավիթավյան

8.Համայնքային սեփականություն հանդիսացող աղբատար մեքենան վարձակալությամբ հանձնելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

9. 13 հունիսի 2011 թվականի ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման թիվ 183 պայմանագիրը լուծելուև «Մանկավարժ» բարեգործական հասարակական կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տարածք հանձնելու մասին

զեկ.Վ.Դավիթավյան

10.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 147 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Մացակյան

11.Վանաձոր համայնքի ավագանու 14 փետրվարի 2020 թվականի թիվ 7 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Գ.Բաղյան

12.Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ.Գ.Բաղյան

13.Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով վարձակալության իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ.Ս.Աբովյան

14.Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գները սահմանելու մասին

զեկ.Ս.Աբովյան

15. Ժաննա Արամի Վարդիկյանին Վանաձոր քաղաքի Բուլղարական 1 ավան թիվ 10 հասցեում գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը նվիրատվությամբ հանձնելու մասին

զեկ.Ս.Աբովյան

16. Վահրամ Հովհաննեսի Սարգսյանին Վանաձոր քաղաքի Բուլղարական 1 ավան թիվ 46 հասցեում գտնվող բնակելի տունը, շինությունը և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը նվիրատվությամբ հանձնելու մասին

զեկ.Ս.Աբովյան

17.Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ. Մ. Ասլանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2021 թվականի N 1223

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ «ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՇՏԱՊ ՀԱՎԱՔ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լուսավոր Հայաստան» կուսակցության կառավարման խորհրդի անդամ, Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Էդիկի Եղիազարյանի կողմից ներկայացրած իրազեկումը, ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով, 20-րդ հոդվածի 3-րդ մասով, 21-րդ և 22-րդ հոդվածներով, 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ ***որոշում եմ.***

1. «Լուսավոր Հայաստան» կուսակցության կողմից 2021 թվականի հունիսի 09-ին ժամը 17:00-ից մինչև 20:00-ն ընկած ժամանակահատվածում, Վանաձոր քաղաքի Արցախ պուրակում հանրային շտապ հավաքի անցկացման վերաբերյալ իրազեկումն ընդունել ի գիտություն:

2. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին համայնքի ղեկավարի որոշման մասին անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև համապատասխան որոշումը փակցնել համայնքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի և տեսանելի տեղում: Որոշումը տեղադրել նաև vanadzor.am համացանցային կայք էջում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 08
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2021 թվականի N 1224

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ՄԵՔԵՆԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 41/1-8/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԱՆՑՈՎԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Վարանցովի Ալավերդյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10052021-06-0029 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով, Վանաձոր համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2020 թվականի թիվ 114-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 15-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տարոն-4 Մեքենաշինարարների թաղամաս թիվ 41/1-8/3 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 9.3քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10052021-06-0029 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Սվետլանա Վարանցովի Ալավերդյանին՝ աստիճաններ տեղադրելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սվետլանա Ալավերդյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 9.3քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 20 (քսան) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 08
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2021 թվականի N 1225

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՋՈՐՅԱՆ ՓՈՂ ԹԻՎ 61 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՆԱՀԻՏ ԱԼԲԵՐՏԻ ԹՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Ալբերտի Թունյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1945195 վկայականը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագրերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով և 32-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Ջորյան փող թիվ 61 հասցեում գտնվող, Անահիտ Ալբերտի Թունյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Ջորյան փող թիվ 61 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 654,0քմ մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Ջորյան փողոց, թիվ 61 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1).

բ) 371,9քմ մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Ջորյան փողոց, թիվ 61-1 անասնաշենք (հատակագիծ թիվ 2):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 08
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2021 թվականի N 1226

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 47 ԵՎ ԹԻՎ 47-1/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԵՐՅՈԺԱ ԱԹԱՆԵՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԽԱՆՈՒԹԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերյոժա Աթանեսի Մարտիրոսյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21042016-06-0010 և թիվ 30042019-06-0036 վկայականները, Վանաձոր համայնքի ղեկավարի 27 հունվարի 2021 թվականին տրված թիվ 8 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն), Վանաձոր համայնքի ղեկավարի 05 ապրիլի 2021 թվականին տրված թիվ 704 որոշումը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, 30.06.2020թ. գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 47 և թիվ 47-1/1 հասցեներում գտնվող, Սերյոժա Աթանեսի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.00706հա ընդհանուր մակերեսով հողամասերը և 135.68քմ մակերեսով խանութը՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, թիվ 47-1/1 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 08
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2021 թվականի N 1227

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23 ՀՈՒԼԻՍԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 792-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ագապի Հայկի Մխիթարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05082013-06-0021 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 23 հուլիսի 2013 թվականի «Ագապի Մխիթարյանին հողամաս տրամադրելու մասին» թիվ 792-Ա որոշումը՝ 31.07.2013թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին (մրցույթով) թիվ 199 պայմանագիրը համարելով լուծված:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքի Տարոն-4 մեք. թիվ 53-1/7 հասցեում գտնվող հողամասի վճարների վերահաշվարկ և վերջնահաշվարկ:

3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, տեղեկատվության և աշխատանքի բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը ուղարկել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 08
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2021 թվականի N 1228

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ «5165» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՇՏԱՊ ՀԱՎԱՔ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «5165» ազգային պահպանողական շարժում կուսակցության գործադիր կոմիտեի ընդհանուր ժողովի 05.06.2021 թվականի արձանագրությունը և «5165» ազգային պահպանողական շարժում կուսակցության նախագահ Գևորգ Թամամյանի կողմից ներկայացրած իրազեկումը, ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով, 20-րդ հոդվածի 3-րդ մասով, 21-րդ և 22-րդ հոդվածներով, 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ ***որոշում եմ.***

1. «5165» ազգային պահպանողական շարժում կուսակցության կողմից 2021 թվականի հունիսի 08-ին ժամը 14:00-ից մինչև 20:00-ն ընկած ժամանակահատվածում, Վանաձոր քաղաքի Արցախ պուրակում հանրային շտապ հավաքի անցկացման վերաբերյալ իրազեկումն ընդունել ի գիտություն:

2. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին համայնքի ղեկավարի որոշման մասին անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև համապատասխան որոշումը փակցնել համայնքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի և տեսանելի տեղում: Որոշումը տեղադրել նաև vanadzor.am համացանցային կայք էջում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 08
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2021 թվականի N 1229

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-Ի ԹԻՎ 253/144 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էմմա Վալերիկի Գրիգորյանի դիմումը և նույնականացման քարտը, Վալերիկ Արտաշ Գրիգորյանի 07.12.2011 թվականին տրված թիվ ԱԲ 064269 մահվան վկայականը, ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Վանաձոր քաղաքի Բազումի անձնագրային բաժանմունքի 27.04.2021 թվականի թիվ 8/59-741 տեղեկանքը և ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոցի թիվ 1 շենքի թիվ 31 բնակարանի վերաբերյալ Վանաձորի քաղաքապետի 1998 թվականի ապրիլի 17-ի «Բնակարանի սեփականաշնորհման մասին» թիվ 253/144 որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումները.

1. Որոշման նախաբանում «Էմմա Վալերի Գրիգորյանը» բառերը փոխարինել «Էմմա Վալերիկի Գրիգորյանը» բառերով:

2. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Գրիգորյան Էմմա Վ.» բառերը փոխարինել «Գրիգորյան Էմմա Վալերիկի» բառերով:

3. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Գրիգորյան Վալերի Ա.» բառերը փոխարինել «Վալերիկ Արտաշ Գրիգորյան» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 09
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2021 թվականի N 1230

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի ԹԻՎ 66/1-22 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դիանա Վլադիմիրովնա Շիշկինայի դիմումը, անձնագիրը, Սվետլանա Վլադիմիրովնա Ասատրյանի 27.05.2021 թվականին տրված թիվ ԲԱ 405054 մահվան մասին պետական վկայականը և ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Տարոն - 4, Ածխ. թիվ 4 շենքի թիվ 1 բնակարանի վերաբերյալ Վանաձորի քաղաքապետի 1997 թվականի մարտի 18-ի «Բնակարանի սեփականաշնորհման մասին» թիվ 66/1-22 որոշման մեջ կատարել հետևյալ ուղղումները.

1. Որոշման նախաբանում «Սվետլանա Վլադիմիրի Ասատրյանը» բառերը փոխարինել «Սվետլանա Վլադիմիրովնա Ասատրյանը» բառերով:

2. Որոշման 1-ին կետի աղյուսակում «Շիշկինա Դիաննա Վ.» բառերը փոխարինել «Շիշկինա Դիանա Վլադիմիրովնա» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 09
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2021 թվականի N 1231

«ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն Ռաֆիկ Նալբանդյանի 2021 թվականի հունիսի 02-ի թիվ 01/7872 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1.Բավարարել Վանաձոր քաղաքի Գր.Լուսավորչի փող., թիվ 49 հասցեում գործող /հաշվառման հասցեն՝ ք.Վանաձոր, Գր.Լուսավորչի փող. թիվ 39/1-23/ «ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն Ռաֆիկ Նալբանդյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 09
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2021 թվականի N 1232

«ԱՐ-ՓԻ» ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱՐ-ՓԻ» հաշվապահական կենտրոն ՍՊԸ-ի տնօրեն Արփինե Մարտինի Ղարաքեշիշյանի 2021 թվականի մայիսի 05-ի թիվ 01/6464 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1.Բավարարել Վանաձոր քաղաքի Վարդանանց փող., թիվ 19/2 հասցեում գործող /գտնվելու վայրը՝ ք. Վանաձոր, Առափնյա փողոց թիվ 4^{4}/16/ «ԱՐ-ՓԻ» հաշվապահական կենտրոն ՍՊԸ-ի տնօրեն՝ Արփինե Մարտինի Ղարաքեշիշյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:

2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 09
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2021 թվականի N 1233

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/1 ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սոկրատ Վազգենի Սուքիասյանի լիազորված անձ Արման Գրիշայի Եգանյանի դիմումը, 06.05.2021թ. թիվ 1954 (նոտարական ակտի կոդ: 763-20210506-79-5089123) լիազորագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 23082019-06-0055 վկայականը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

Հաստատել և համարել փոփոխված ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց, թիվ 1/1 հասցեի 0.322հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության հողերից՝ որպես էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողեր և գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերից՝ որպես կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության հողեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 09
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2021 թվականի N 1234

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/1-6 ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սոկրատ Վազգենի Սուքիասյանի լիազորված անձ Արման Գրիշայի Եգանյանի դիմումը, 06.05.2021թ. թիվ 1954 (նոտարական ակտի կոդ :763-20210506-79-5089123) լիազորագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 12122019-06-0057 վկայականը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

Հաստատել և համարել փոփոխված ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց, թիվ 1/1-6 հասցեի 0.62755հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության հողերից՝ որպես էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողեր և գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերից՝ որպես կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության հողեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 09
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2021 թվականի N 1235

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂ ԹԻՎ 2-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱՅԱՆԵ ԹՈՌՆԻԿԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գայանե Թոռնիկի Օհանյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1900067 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման կողմից 30.03.2021թ. տրված թիվ ՄՏ-30032021-06-0401 միասնական տեղեկանքը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010թ. հունիսի 01-ի թիվ 186-Ն հրամանով՝ ***որոշում եմ.***

Հաստատել Վանաձոր քաղաքի Շիրակացու փող թիվ 2-1 հասցեում գտնվող Գայանե Թոռնիկի Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող 1.91500հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 09
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2021 թվականի N 1236

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 09 ՓԵՏՐՎԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 188 ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՓԵՏՐՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 295-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Օնիկ Ռաֆիկի Նալբանդյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24022015-06-0016 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքապետի 09 փետրվարի 2005 թվականի «Օնիկ Նալբանդյանին հողամաս տրամադրելու մասին» թիվ 188 և Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 16 փետրվարի 2015 թվականի «Վանաձորի քաղաքապետի և Օնիկ Նալբանդյանի միջև կնքված հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 295-Ա որոշումը՝ 11.02.2005թ. հողամասի վարձակալության (մրցույթով) թիվ 165 պայմանագիրը և 19.02.2015թ. թիվ 41 համաձայնագիրը համարելով լուծված:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ կատարել Վանաձոր քաղաքի Գրիգոր Լուսավորչի փողոց թիվ 39-1/35 հասցեում գտնվող հողամասի վճարների վերահաշվարկ և վերջնահաշվարկ:

3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, տեղեկատվության և աշխատանքի բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը ուղարկել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2021 թվականի N 1237

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2, ՔՇՀ-7 ԹԱՂԱՄԱՍ, ԹԻՎ 10 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆիկ Անանիկի Ջոթյանի 26.01.2021թ. թիվ 02/1151 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-7 թաղամաս, թիվ 10 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 33.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 31.93քմ) մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 33.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված մետաղական ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-7 թաղամաս, թիվ 10 շենքի հյուսիսային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-7 թաղամաս, թիվ 10/15-1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հունիսի 2021 թվականի N 1238

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 , ՔՇՀ-4 ԹԱՂԱՄԱՍ, ԹԻՎ 6 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժորա Վանիչկի Մգոյանի 26.01.2021թ. թիվ 02/1173 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-4 թաղամաս, թիվ 6 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 18.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 17.11քմ) մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 18.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-4 թաղամաս, թիվ 6 շենքի հյուսիսային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-3 թաղամաս, թիվ 6/6-1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 09
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2021 թվականի N 1239

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց թիվ 1 հասցեի հարավային մասում գտնվող 0,04315հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ներսիսյան փողոց, թիվ 7/8-9 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2021 թվականի N 1240

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՁՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 89-29 ԵՎ ԹԻՎ 89-29/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳՈՌ ԱՇՈՏԻ ՉՈԲԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոռ Աշոտի Չոբանյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10052019-06-0007 և թիվ 14012020-06-0020 վկայականները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Ձորյան փողոց թիվ 89-29 և թիվ 89-29/1 հասցեներում գտնվող Գոռ Աշոտի Չոբանյանին սեփականության իրավունքով պատկանող 65.1քմ ընդհանուր մակերեսով հողամասերը և 31.4քմ մակերեսով ավտոտնակը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ձորյան փողոց, թիվ 89-29 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2021 թվականի N 1241

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 6 ԴՊՐՈՑԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Օնիկ Ռաֆիկի Նալբանդյանի 30.01.2021թ. թիվ 1520 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի թիվ 6 դպրոցի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 18.48քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 18.29քմ) մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 19.8քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի թիվ 6 դպրոցի հյուսիսային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Գր.Լուսավորչի փողոց, թիվ 39-1/35 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2021 թվականի N 1242

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1-18/18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱՐԵԿ ԿԱՐԵՆԻ ԲՐՈՒՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարեկ Կարենի Բրուտյանի 29.01.2021թ. թիվ 1361 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11052021-06-0023 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց թիվ 1-18/18 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 18.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 16.8քմ) ավտոտնակը 46800 (քառասունվեց հազար ութ հարյուր) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 18.0քմ մակերեսով հողամասը 81440 (ութսունմեկ հազար չորս հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Նարեկ Կարենի Բրուտյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Նարեկ Բրուտյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2021 թվականի N 1243

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 905 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 27 ապրիլի 2021 թվականի թիվ 905 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 27 ապրիլի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամասի Զեյթունի փողոցի թիվ 3/1 հասցեին կից գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 905 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետում «նշված» բառից հետո հանել «0.01հա մակերեսով» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 10
Ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2021 թվականի N 1244

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 47 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Գառնիկի Համբարյանի դիմումը, 09.06.2021թ. անշարժ գույքի առուվաճառքի թիվ 2619 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20210609-2-5158809), անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1883840 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոց թիվ 47 հասցեում գտնվող տարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Նարեկացու փողոց, թիվ 47/1-5 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2021 թվականի N 1245

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 45 ՇԵՆՔ, ԹԻՎ 34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՆԱՐԻՆԵ ԼԵՎՈՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹ, ԲՆԱԿԱՐԱՆԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարինե Լևոնի Կարապետյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09082018-06-0084 վկայականը, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից տրված տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Հաստատել Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 45 շենք, թիվ 34 հասցեում գտնվող, Նարինե Լևոնի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող 67.75քմ մակերեսով խանութ, բնակարանի, որից 29.49քմ մակերեսի գործառնական նշանակությունը բնակելի է և բազմաբնակարան շենքի զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 1458.1քմ մակերեսով հողամասից Նարինե Լևոնի Կարապետյանի մասնաբաժինը հանդիսացող 24.6քմ հողամասի փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Լազյան փողոց, թիվ 45 շենք, թիվ 34 խանութ բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2021 թվականի N 1246

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 19-19/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐՄԱՆ ԱՐԵՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԱԽՄԱՏԻ ԱԿՈՒՄԲԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Արենի Գասպարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23032021-06-0052 վկայականը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ, 27-րդ, 31-րդ կետերով և 32-րդ կետի բ) ենթակետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով և 32-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 19-19/1 հասցեում գտնվող, Արման Արենի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող շախմատի ակումբը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:
2. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 19-19/1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.
ա) 127.86քմ մակերեսով շախմատի ակումբի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, թիվ 19-19/1 շախմատի ակումբ (հատակագիծ թիվ 1).
բ) 42.55քմ մակերեսով շախմատի ակումբի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, թիվ 19-19/2 շախմատի ակումբ (հատակագիծ թիվ 2).:
3. Ճանաչել օրինական Արման Արենի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց, թիվ 19-19/2 հասցեում գտնվող շախմատի ակումբում ինքնակամ իրականացված թվով 3 ձևափոխումները:
4. Սույն որոշման 3-րդ կետում նշված թվով 3 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 11320 (տասնմեկ հազար երեք հարյուր քսան) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2021 թվականի N 1247

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 82-84/19-20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՐԱՉԻԿ ԱՐՏԱՇԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրաչիկ Արտաշի Գալստյանի 25.01.2021թ. թիվ 978 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14052021-06-0053 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 82-84/19-20 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 65.4քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 62.64քմ) ավտոտնակը 170040 (հարյուր յոթանասուն հազար քառասուն) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 65.4քմ մակերեսով հողամասը 295870 (երկու հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր յոթանասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Հրաչիկ Արտաշի Գալստյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Հրաչիկ Գալստյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2021 թվականի N 1248

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 32 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 2021 թվականի հունվարի 15-ի «Վանաձոր համայնքի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 32 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 10
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2021 թվականի N 1249

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ՇՏԱՊ ՀԱՎԱՔ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Եվրոպական կուսակցություն» կուսակցության խորհրդի նախագահ Տիգրան Խզմալյանի կողմից ներկայացրած իրազեկումը, ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով, 20-րդ հոդվածի 3-րդ մասով, 21-րդ և 22-րդ հոդվածներով, 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ ***որոշում եմ.***

1. «Հայաստանի Եվրոպական կուսակցություն» կուսակցության կողմից 2021 թվականի հունիսի 15-ին ժամը 18:00-ից մինչև 22:00-ն ընկած ժամանակահատվածում, Վանաձոր քաղաքի Արցախ պուրակում հանրային շտապ հավաքի անցկացման վերաբերյալ իրազեկումն ընդունել ի գիտություն:

2. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին համայնքի ղեկավարի որոշման մասին անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև համապատասխան որոշումը փակցնել համայնքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի և տեսանելի տեղում: Որոշումը տեղադրել նաև vanadzor.am համացանցային կայք էջում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում համայնքապետարանի վարչական շենքում այն փակցվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2021 թվականի N 1250

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 13Ա/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԳՈՒՐԳԵՆԻ ՎԱՆԵՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմենուհի Գուրգենի Վանեսյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1856619 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման կողմից 02.06.2021թ. տրված թիվ ՄՏ-02062021-06-0466 միասնական տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Համբարձումյան փողոց թիվ 13ա/7 հասցեում գտնվող Արմենուհի Գուրգենի Վանեսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Համբարձումյան փողոց, թիվ 13-1/7 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2021 թվականի N 1251

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Տ. ՄԵԾԻ ՊՈՂ. ԹԻՎ 46 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԴԱՀԼԻՃԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 02.06.2021թ. թիվ Կ-02062021-06-0028 որոշումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1876019 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Տ. Մեծի պող. թիվ 46 հասցեում գտնվող 215.27քմ մակերեսով սպորտային դահլիճին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 46-2/2 սպորտային դահլիճ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2021 թվականի N 1252

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓՈՂ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՌՈԶԱ ՄԱՆԹԱՇԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոզա Մանթաշի Ասատրյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1934312 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման կողմից 04.05.2021թ. տրված թիվ ՄՏ-04052021-06-0395 միասնական տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Թատերական փող թիվ 9 հասցեում գտնվող Ռոզա Մանթաշի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող կիսակառույցին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Թատերական փողոց, թիվ 9/1-1 կիսակառույց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2021 թվականի N 1253

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-1 ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 5/8-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՀԱՆԻ ԴԱԲԱՂՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վլադիմիր Վահանի Դաբաղյանի 29.01.2021թ. թիվ 02/1401 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21042021-06-0006 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տարոն-1 թաղամաս թիվ 5/8-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 27.8քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 25.84քմ) մետաղական ավտոտնակը 47260 (քառասունյոթ հազար երկու հարյուր վաթսուն) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 27.8քմ մակերեսով հողամասը 53210 (հիսուներեք հազար երկու հարյուր տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վլադիմիր Վահանի Դաբաղյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Վլադիմիր Դաբաղյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել մետաղական ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2021 թվականի N 1254

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 41/1-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՇՈՏ ԱՐՏԻԿԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԾԱԾԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԾԱԾԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Արտիկի Թումանյանի դիմումը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03052013-06-0035 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Վանաձոր համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2020թ. թիվ 114-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս թիվ 41/1-1 հասցեում գտնվող, Աշոտ Արտիկի Թումանյանին սեփականության իրավունքով պատկանող ծածկի զբաղեցրած 0.0925հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի արդյունաբերական օբյեկտների հողերից՝ որպես բնակելի կառուցապատման հողեր՝ համաձայն ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի:
2. Փոխել Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս թիվ 41/1-1 հասցեում գտնվող, Աշոտ Արտիկի Թումանյանին սեփականության իրավունքով պատկանող 144քմ մակերեսով ծածկի գործառնական նշանակությունը՝ արտադրականից՝ որպես բնակելի գործառնական նշանակությամբ ծածկ:
3. Վանաձոր քաղաքի Տարոն-4 թաղամաս թիվ 41/1-1 հասցեում գտնվող, Աշոտ Արտիկի Թումանյանին սեփականության իրավունքով պատկանող ծածկի զբաղեցրած 0.0925հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2030թ. դեկտեմբերի 30-ը:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Աշոտ Արտիկի Թումանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ծածկի զբաղեցրած 0.0925հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ վարձավճարի չափը 1.0քմ մակերեսով հողամասի համար սահմանելով ամսական 20 (քսան) ՀՀ դրամ:
5. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-4 թաղամաս, թիվ 41/1-1 ծածկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2021 թվականի N 1255

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԽԱՆՈՒԹՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Շահումյանի Մարաբյանի և Ռոբերտ Գալուստի Բրուդյանի 22.01.2021թ. թիվ 952 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 31.03.2021թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-46/21 Ի եզրակացությունը, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կողմից 25.05.2021թ. ներկայացված թիվ ՔՏՄ/09.2.4/6139-21 գրությունը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով,ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոց թիվ 6 հասցեին կից ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 8.75քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 6.16քմ) խանութի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 8.88քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Փոխել Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոց թիվ 6 հասցեին կից գտնվող խանութի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.000442հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի և 0.000446հա մակերեսով հողամասի

գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված խանութի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված խանութի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին խանութը և հողամասը օտարելու վերաբերյալ:
6. Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոց թիվ 6 հասցեին կից գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Նժդեհի փողոց, թիվ 6-1/1 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 11
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2021 թվականի N 1256

ՍՈՒՍԱՆՆԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 07.05.2021 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 07.05.2021 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Սուսաննա Պողոսյանը Վանաձոր քաղաքի Տարոն-3 ՔՇՀ-7 թիվ 48/10 և 48/10-1 հասցեներում կառուցված ավտոտեխսպասարկման կետը՝ («Լվա ինքդ») առանց համապատասխան ավարտական ակտի (շահագործման թույլտվության) շահագործել է:

2021 թվականի մայիսի 07-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի մայիսի 21-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ: Սուսաննա Պողոսյանին ուղարկված փոստային ծանուցագրի հետադարձ կտրոնը առկա չի եղել:

Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 25 մայիսի 2021 թվականին ընդունվել է «Սուսաննա Վոլոդյայի Պողոսյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնելու մասին» թիվ 1141 որոշումը:

Սուսաննա Պողոսյանին 26 մայիսի 2021 թվականին ուղարկված Վանաձոր համայնքի ղեկավարի թիվ 1141 որոշման հետադարձ կտրոնը ստացվել է, համաձայն որի, Սուսաննա Պողոսյանը ծանուցվել է 05.06.2021 թվականին:

Ուստի, Սուսաննա Վոլոդյայի Պողոսյանի վերաբերյալ 07.05.2021 թվականին հարուցված վարչական վարույթը համարվում է վերսկսված, քանի որ դրա կասեցման հիմք դարձած հանգամանքը վերացել է:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված աշխատանքներն ավարտելուց և հաստատված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված այլ աշխատանքները կառուցապատողի կողմից վերջինիս միջոցների հաշվին իրականացնելուց հետո օբյեկտը շահագործման է ընդունվում շահագործման թույլտվության ձևակերպմամբ: Շահագործման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը՝ Կառավարության սահմանած կարգով:

Ավարտված շինարարական օբյեկտի շահագործումը թույլատրվում է միայն շահագործման թույլտվությունը ձևակերպելուց հետո:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 15711-րդ հոդվածի համաձայն՝ ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 24411-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը քննում է սույն օրենսգրքի 152.2-րդ հոդվածի 2-րդ մասով, 156.1-ին հոդվածով, 157.1-157.14-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը, ինչպես նաև 152-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ քաղաքաշինական նորմերի խախտման մասով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) ենթակետով, 49-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սուսաննա Վոլոդյայի Պողոսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը վերսկսել և եզրափակել:

2. Կասեցնել Վանաձոր քաղաքի Տարոն-3 ՔՇՀ-7 թիվ 48/10 և 48/10-1 հասցեներում կառուցված ավտոտեխսպասարկման կետի՝ («Լվա ինքդ») շահագործումը՝ մինչև սահմանված կարգով շինարարական օբյեկտի շահագործման թույլտվության ձևակերպումը:

3. Առաջարկել քաղաքաշինության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 15711-րդ հոդվածի համաձայն՝ Սուսաննա Վոլոդյայի Պողոսյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2021թ. հունիսի 11
ք.Վանաձոր